Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-1107-17.06.2025-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2021 թվականի հունիսի 30-ի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 264-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակության՝ նոր 3.1 մասով.

«3.1 Սույն օրենսգրքի 46-րդ գլխով նախատեսված վարույթը կարող է իրականացվել գրավոր ընթացակարգով, եթե դատարանը սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ եկել է եզրահանգման, որ գրավոր ընթացակարգով հնարավոր է ապահովել վարույթի լիարժեք, համակողմանի և արդարացի քննությունը: Այդ մասին դատարանը կայացնում է որոշում և սույն օրենսգրքով սահմանված կարգով ծանուցում վարույթի մասնակիցներին՝ դատական ակտի կայացման օրվա մասին:»:

Հոդված 2. Օրենսգրքի 349-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«6. Նախագահողը կնքում է դատավճռի յուրաքանչյուր էջը և ստորագրում է դատավճռի եզրափակիչ մասը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 350-րդ հոդվածի 6-րդ մասում «ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում,» բառերը փոխարինել «ոչ ուշ, քան երկշաբաթյա ժամկետում,» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 355-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակության՝ նոր 6.1 կետով.

«6 .1) բողոքը գրավոր ընթացակարգով քննելու վերաբերյալ միջնորդություն՝ առկայության դեպքում .»:

Հոդված 5. Օրենսգրքի 366-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված հիմքերի բացակայության դեպքում վերաքննիչ դատարանի որոշմամբ բողոքն ընդունվում է վարույթ և նշանակվում դատաքննության, իսկ սույն օրենսգրքի 264-րդ հոդվածի 3⍰1-րդ մասով նախատեսված դեպքում՝ որոշման մեջ նշվում է բողոքի քննությունը գրավոր ընթացակարգով իրականացնելու մասին:»:

Հոդված 6. Օրենսգրքի 368-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.1-ին մասով.

«2.1. Ուսումնասիրված քրեական գործը գրավոր ընթացակարգով դատաքննության նշանակելու մասին որոշմամբ.

1) սահմանվում է դատական ակտի կայացման օրը.

2) սահմանվում է վարույթի մասնակիցների կողմից միջնորդությունների և բացատրությունների ներկայացման վերջնաժամկետը.

3) լուծվում է խափանման միջոցի հարցը:»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.2 մասով.

«2.2. Սույն հոդվածի 2.1 մասով նախատեսված դատական ակտի կայացման օրը դատարանի պատճառաբանված որոշմամբ կարող է երկարաձգվել սույն

օրենսգրքով վերաքննիչ բողոքների քննության համար նախատեսված ժամկետների սահմաններում:»:

3) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Վերաքննությունը բանավոր ընթացակարգով իրականացվելու դեպքում առաջին դատական նիստը նշանակվում է քրեական գործն ստանալու օրվանից հետո՝ քսան օրվա, սակայն ոչ ուշ, քան առաջին վերաքննիչ բողոքը ներկայացնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում:»:

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1-ին մասով.

«3.1. Գրավոր ընթացակարգով իրականացվող վերաքննությունը բանավոր ընթացակարգով փոխակերպելու մասին որոշում կայացնելու դեպքում՝ առաջին դատական նիստը նշանակվում է որոշում կայացնելուց հետո՝ քսան օրվա ընթացքում:»:

Հոդված 7. Օրենսգիրքի 370-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակության նոր 2.1 մասով.

«2.1. Վերաքննիչ դատարանը եզրափակիչ դատական ակտի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը քննում և որոշում է կայացնում ողջամիտ ժամկետում, բայց ոչ ուշ, քան վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում: Սույն մասով նախատեսված ժամկետը Վերաքննիչ դատարանի պատճառաբանված որոշմամբ կարող է երկարաձգվել 4 ամսից ոչ ավելի ժամկետով:»:

Հոդված 8. Օրենսգրքի 379-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «հրապարակումից» բառը փոխարինել «հրապարակումից կամ կայացումից» բառերով.

2) 2-րդ մասում «հրապարակումից հետո՝ ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում,» բառերը փոխարինել «հրապարակումից կամ կայացումից հետո՝ ոչ ուշ, քան երկշաբաթյա ժամկետում,»:

Հոդված 9.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

2. Նախքան սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված կարգավորումների ուժի մեջ մտնելը՝ Վերաքննիչ դատարան ներկայացված և վարույթ ընդունված վերաքննիչ բողքները քննվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում:

Տեղեկանք փոփոխվող հոդվածների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2021 թվականի հունիսի 30-ի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 264-րդ հոդվածը~~ում~~ լրացնել հետևյալ բովանդակության՝ նոր 3.1 մասով.

«3.1 Սույն օրենսգրքի 46-րդ գլխով նախատեսված վարույթը կարող է իրականացվել գրավոր ընթացակարգով, եթե դատարանը սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ եկել է եզրահանգման, որ գրավոր ընթացակարգով հնարավոր է ապահովել վարույթի լիարժեք, համակողմանի և արդարացի քննությունը: Այդ մասին դատարանը կայացնում է որոշում և սույն օրենսգրքով սահմանված կարգով ծանուցում վարույթի մասնակիցներին՝ դատական ակտի կայացման օրվա մասին:»:

~~1) 3-րդ մասում «ինչպես նաեւ 47» բառերը փոխարինել «ինչպես նաեւ 46» բառերով,~~

~~2) 5-րդ մասում «Դատարանը» բառից հետո լրացնել «կողմի միջնորդությամբ կամ» բառերով:~~

Հոդված 2. Օրենսգրքի 349-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«6. Նախագահողը կնքում է դատավճռի յուրաքանչյուր էջը եւ ստորագրում է դատավճռի եզրափակիչ մասը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 350-րդ հոդվածի 6-րդ մասում «ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում,» բառերը փոխարինել «ոչ ուշ, քան երկշաբաթյա ժամկետում ,» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 355-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակության՝ նոր 6.1 կետով.

«6՝1) բողոքը գրավոր ընթացակարգով քննելու վերաբերյալ միջնորդություն՝ առկայության դեպքում՝»:

Հոդված 54. Օրենսգրքի 366-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված հիմքերի բացակայության դեպքում վերաքննիչ դատարանի որոշմամբ բողոքն ընդունվում է վարույթ և նշանակվում դատաքննության, իսկ սույն օրենսգրքի 264-րդ հոդվածի 3՝1-րդ մասով նախատեսված դեպքում՝ որոշման մեջ նշվում է բողոքի քննությունը գրավոր ընթացակարգով իրականացնելու մասին:»: ~~«3. Սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերում նշված հիմքերի բացակայության դեպքում վերաքննիչ դատարանի որոշմամբ բողոքն ընդունվում է վարույթ եւ նշանակվում դատաքննության՝ որոշման մեջ նշելով այն գրավոր, իսկ սույն օրենսգրքի 264-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում, ինչպես նաեւ սույն օրենսգրքի 365-րդ հոդվածով նախատեսված միջնորդությունը բավարարելու դեպքում՝ բանավոր ընթացակարգով իրականացնելու մասին:~~

Հոդված 65. Օրենսգրքի 368-րդ հոդվածում՝

~~1) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.~~

~~«2. Ուսումնասիրված քրեական գործը բանավոր ընթացակարգով դատաքննության նշանակելու մասին որոշմամբ.~~

~~1) սահմանվում է դատական նիստի վայրը, տարին, ամիսը, օրը, ժամը.~~

~~2) ապացույցներ հետազոտելու անհրաժեշտության դեպքում սահմանվում են դատական նիստում անմիջականորեն հետազոտման ենթակա ապացույցների ծավալը, ցուցմունք տալու համար դատարան հրավիրվող անձանց ցանկը.~~

~~3) լուծվում է խափանման միջոցի հարցը.~~

~~4) լուծվում է դատական նիստը դռնբաց կամ դռնփակ անցկացնելու հարցը:».~~

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.1-ին մասով.

«2.1. Ուսումնասիրված քրեական գործը գրավոր ընթացակարգով դատաքննության նշանակելու մասին որոշմամբ.

1) սահմանվում է դատական ակտի կայացման օրը.

2) սահմանվում է վարույթի մասնակիցների կողմից միջնորդությունների և բացատրությունների ներկայացման վերջնաժամկետը.

3) լուծվում է խափանման միջոցի հարցը:»:

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.2 մասով.

«2.2. Սույն հոդվածի 2.1 մասով նախատեսված դատական ակտի կայացման օրը դատարանի պատճառաբանված որոշմամբ կարող է երկարաձգվել սույն օրենսգրքով վերաքննիչ բողոքների քննության համար նախատեսված ժամկետների սահմաններում:»:

4) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Վերաքննությունը բանավոր ընթացակարգով իրականացվելու դեպքում առաջին դատական նիստը նշանակվում է քրեական գործն ստանալու օրվանից հետո՝ քսան օրվա, սակայն ոչ ուշ, քան առաջին վերաքննիչ բողոքը ներկայացնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում:»:

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1-ին մասով.

«3.1.Գրավոր ընթացակարգով իրականացվող վերաքննությունը բանավոր ընթացակարգով փոխակերպելու մասին որոշում կայացնելու դեպքում՝ առաջին դատական նիստը նշանակվում է որոշում կայացնելուց հետո՝ քսան օրվա ընթացքում:»:

~~***Հոդված 6.***~~ ~~Օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.~~

~~«1. Դատարանի որոշմամբ բանավոր ընթացակարգով դատաքննությանը կարող է պարտադիր համարվել բողոքը ներկայացրած անձի, վարույթի մյուս մասնակիցների, այդ թվում՝ դատախազի մասնակցությունը»:~~

Հոդված 7. Օրենսգիրքի 370-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակության նոր 2.1 մասով.

«2.1. Վերաքննիչ դատարանը եզրափակիչ դատական ակտի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը քննում եւ որոշում է կայացնում ողջամիտ ժամկետում, բայց ոչ ուշ, քան վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում: Սույն մասով նախատեսված ժամկետը Վերաքննիչ դատարանի պատճառաբանված որոշմամբ կարող է երկարաձգվել 4 ամսից ոչ ավելի ժամկետով:»:

Հոդված 8. Օրենսգրքի 379-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «հրապարակումից» բառը փոխարինել «հրապարակումից կամ կայացումից» բառերով.

2) 2-րդ մասում «հրապարակումից հետո՝ ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում,» բառերը փոխարինել «հրապարակումից կամ կայացումից հետո՝ ոչ ուշ, քան երկշաբաթյա ժամկետում,»:

Հոդված 9.

3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

4. Նախքան սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված կարգավորումների ուժի մեջ մտնելը՝ Վերաքննիչ դատարան ներկայացված և վարույթ ընդունված վերաքննիչ բողոքները քննվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2021-2026 թվականների ռազմավարությամբ ամրագրվեցին անհրաժեշտ մի շարք գործողություններ կապված, ի թիվս այլնի, դատարանների ծանրաբեռնվածության թեթևացման, դատական համակարգի բարեփոխումների, քրեաիրավական, քաղաքացիական և վարչական դատավարության, սնանկության, վեճերի լուծման այլընտրանքային եղանակների (...) ինչպես նաև արդարադատության համակարգի ընդհանուր զարգացման այլ ոլորտների հետ:[1] Այս համատեքստում, քրեական դատավարության օրենսգրքի կիրառման ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 30-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունված քրեական դատավարության օրենսգրքի կիրառման ընթացքում պրակտիկայի վերլուծությունն ու արձանագրված խնդիրների լուծման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների իրականացումը:

---

[1] Տե՛ս ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի թիվ 1133-Լ որոշմամբ հաստատված Հավելված 1՝ ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2021-2026 թվականների ռազմավարություն, էջեր 3-8:

Արդարադատության նախարարության կողմից դատահիրավական համակարգի շարունակական կատարելագործման նպատակով պարբերաբար իրականացվող ուսումնասիրությունների և աշխատանքային տարբեր քննարկումների արդյունքում բացահայտված և հատուկ ուշադրություն արժանի հարցերից են վերաքննիչ ատյանի կողմից իրականացվող վերանայման վարույթներով գործերի ողջամիտ քննության կառուցակարգերի պահպանմանը, դատարանի ծանրաբեռնվածության թեթևացմանը, արդյունավետ արդարադատության իրականացումը երաշխավորելուն, ինչպես նաև դատական խնայողության ապահովմանը վերաբերող հարցերը:

Այսպես, դատարանների գործունեության վիճակագրությունը ցույց է տալիս, որ առաջին ատյանի դատարանների կողմից քննված մեծաքանակ քրեական գործեր բողոքարկվում են վերաքննիչ դատարանում: Մասնավորապես, ՀՀ ընդհանուր իրավասության դատարաններում քրեական գործերի քննության ընդհանուր թիվը 2024 թվականին կազմել է 3394, որից բողոքարկված վարութային ակտերի ընդհանուր թիվը կազմել է 1725: Իսկ Վերաքննիչ քրեական դատարանի 2024 թվականի գործունեության վերաբերյալ հաշվետվությամբ նշվել է, որ հաշվետու ժամանակահատվածի սկզբում նախորդ հաշվետու ժամանակահատվածից փոխանցված գործերի ընդհանուր թիվը կազմել է 558 գործ: Իսկ հաշվետու ժամանակահատվածում ստացված բողոքների ընդհանուր թիվ՝ շուրջ 8674 գործ:[2]

Այս համատեքստում, քրեական գործերով վերաքննիչ բողոքների մեծաքանակության պայմաններում պետության խնդիրն է օրենսդրությամբ ապահովել արդարադատության իրականացումն ընթացակարգային այնպիսի կանոններով, որոնցով երաշխավորվեն հրապարակային դատաքննության իրավունքի իրացման անհրաժեշտ իրավական պայմաններ, ***այդ թվում՝ նաև***

[2] Տե՛ս ՀՀ ընդհանուր իրավասության դատարաններում քրեական գործերի քննության 2024 թվականի հաշվետվություն և Վերաքննիչ քրեական դատարանի 2024 թվականի գործունեության վերաբերյալ հաշվետվություն: Հղումը՝ https://court.am/hy/statistic-inner/249:

դատարանում գործերի քննության դատավարական ձևերի բազմազանության կիրառմամբ, ելնելով քննվող գործերի առանձնահատկություններից և դրանց արդար, արագ ու արդյունավետ լուծման անհրաժեշտությունից: Ընդ որում, հարցի քննարկման փուլում, անհրաժեշտ է ընդգծել այն կարևոր հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում գործող ոչ լրիվ կամ սահմանափակ վերաքննության ինստիտուտի հիմնական առանձնահատուկ բաղադրիչն այն է, որ վերաքննիչ դատարանը կաշկանդված է վերաքննիչ բողոքի հիմքերով և հիմնավորումներով, և, ըստ այդմ, դատական ակտը վերանայվում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հարկ է ընդգծել, որ բոլոր այն դեպքերում, երբ քրեական գործերով վերաքննիչ բողոքների հիման վրա իրականացվում է առաջին ատյանի դատարանի կողմից հաստատած փաստերի, հետազոտված ապացույցների հիման վրա բողոքի քննություն, և դատարանը գործի քննության արդյունքում չի գալիս այն եզրահանգման, որ անհրաժեշտ է կողմերի բանավոր լսումների անցկացումը, կամ կողմը ապացույցներ հետազոտելու միջնորդություն չի ներկայացնում, վերաքննիչ բողոքի բանավոր ընթացակարգով քննությունը դատարանի ծանրաբեռնվածություն է ստեղծում, ինչպես նաև կարող է հանգեցնել գործի ողջամիտ ժամկետներում քննության չպահպանմանը:

Այսպես, նախ, Օրենսգրքով վարույթի մասնակիցների հնարավորություն է տրվում վերաքննության շրջանակում ներկայացնել ապացույցների հետազոտելու միջնորդություն: Ընդ որում, նման միջնորդության բավարարման համար Օրենսգրքով սահմանվել է ապացուցողական բարձր շեմ, ինչը հաճախ կարող է հանգեցնել ինչպես վերաքննության սահմաններից ելնելով միջնորդության մերժման դեպքերի առկայությանը, այնպես էլ՝ հաճախ ապացուցողական բարձր շեմի առկայությամբ պայմանավորված նման միջնորդություն չներկայացնելու դեպքերի մեծաքանակությանը: Արդյունքում, ստացվում է, որ ապացույցների հետազոտելու

միջնորդություն չներկայացնելու դեպքում վերաքննիչ ատյանը առաջին ատյանի հաստատած փաստական հանգամանքների շրջանակում իրականացնում է վերաքննիչ բողոքի քննությունը՝ դրա համար հրավիրելով դատական նիստեր, զգալի ռեսուրսներ է ուղում, ինչի պայմաններում վերաքննիչ ատյանի՝ սահմանափակ վերաքննություն իրականացնելու ինստիտուտը չի երաշխավորվում:

Միևնույն ժամանակ, բարձրացված խնդիրն առավել ակնառու է, օրինակ՝ Օրենսգրքի 377-րդ հոդվածով նախատեսված հիմքով վերաքննիչ այն բողոքների քննության դեպքում, երբ բողոքն առնչվում է պատժի նշանակման կամ պատժի կրման հարցը լուծելուն: Մասնավորապես, վերաքննիչ բողոքի հիմքերի սահմաններում առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված ապացույցների հիման վրա պատժի նշանակման կամ կրման հարցը լուծելիս դատարանը շատ դեպքերում կարող է անհրաժեշտ չհամարել բողոքի քննությունը բանավոր ընթացակարգով անցկացնել՝ անհրաժեշտության բացակայությամբ պայմանավորված, որպիսի պայմաններում դատական նիստերի հրավիրումը, դատական նիստեր հրավիրելու պարբերականությունը, նիստերի հետաձգումները կարող են լուրջ ազդեցություն ունենալ և՛ արդյունավետ արդարադատություն իրականացնելու, և՛ գործերի քննությունը ողջամիտ ժամկետներում ապահովելու տեսանկյունից:

Նման պայմաններում վերաքննության ինստիտուտի իրավական նշանակության ու արդյունավետ կիրառումն ապահովելու տեսանկյունից, կարևոր է մաշկել այնպիսի ընթացակարգային կանոններ, որոնցով հնարավորություն կտրվի դատարանների ոչ օպտիմալ ծանրաբեռնվածության թեթևացման միջոցով նաև լուծել վերաքննիչ բողոքների ողջամիտ ժամկետներում քննության, արդարադատության արդյունավետության երաշխավորման, ինչպես նաև դատական խնայողությանն առնչվող խնդիրները:

Անդրադառնալով վճռին ներկայացվող պահանջներին, հարկ է նկատել, որ դատարանի մի քանի տասնյակ էջերի հասնող վճիռների յուրաքանչյուր էջը

նախագահողի կողմից ստորագրելը լրացուցիչ դժվարություն և անհարկի ծանրաբեռնվածություն է ստեղծում: Մասնավորապես, վճռին ներկայացվող միայն ձևական պահանջների ապահովման համար հատկացվում է լրացուցիչ ժամանակ, որն արդյունավետության տեսանկյունից խիստ մտահոգիչ է: Նման պայմաններում կարևորվում է ձևական պահանջների հնարավորի կրճատման միջոցով հասնել ժամանակի արդյունավետ կառավարմանն ու անհարկի չծանրաբեռնել դատարաններին:

Նշվածի լույսի ներքո, դատարանների կողմից դատական ակտերի ծանուցումները պատշաճ իրականացնելու հարցը Արդարադատության նախարարության կողմից մշտապես դատահիրավական ոլորտի կատարելագործման կարևոր հարցերից է դիտարկվում: Այս համատեքստուում, առանցքային պետք է համարել դատարանների համար օբյեկտիվ և իրական հնարավորության ապահովման միջոցով ծանուցումների պատշաճ համակարգի երաշխավորումը: Վճիռը դատական վարույթի կողմերին ուղարկելու առումով կարևոր է համարվում դատարանների համար իրական և օբյեկտիվ հնարավորություն ստեղծելը՝ ապահովելու ողջամիտ ժամկետներում վճռի մասին ծանուցումները:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով (այսուհետ նաև՝ Նախագիծ) առաջարկվում է սահմանել, որ Օրենսգրքի 46-րդ գլխով նախատեսված վարույթը կարող է իրականացվել գրավոր ընթացակարգով, եթե դատարանը սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ եկել է եզրահանգման, որ գրավոր ընթացակարգով հնարավոր է ապահովել վարույթի լիարժեք, համակողմանի և արդարացի քննությունը: Այդ մասին դատարանը կայացնում է որոշում և օրենսգրքով սահմանված կարգով ծանուցում վարույթի մասնակիցներին՝ դատական ակտի կայացման օրվա մասին: Այլ խոսքով,

պահպանելով Օրենսգրքով վերաքննիչ բողոքների քննությամբ համար գործող կարգը, այսինքն՝ բանավոր ընթացակարգը, վերաքննիչ ատյանին տրվում է հնարավորություն վերաքննիչ բողոքի քննությունն իրականացնել գրավոր, այդ մասին կայացնելով որոշում:գրավոր ընթացակարգով իրականացվող վարույթներում ներառել նաև Օրենսգրքի 46-րդ գլխով նախատեսված վարույթը: Մասնավորապես, դատական վերանայման ինստիտուտում վերաքննություն իրականացնելիս Նախագծով առաջարկվում է սահմանել բողոքների քննության գրավոր ընթացակարգ:— Այլ կերպ՝ ամրագրվում է վերաքննիչ բողոքները գրավոր ընթացակարգով քննելու ընդհանուր օրենսդրական կանխավարկած՝ սահմանելով ինչպես այդ մասին վերաքննիչ դատարանի կողմից որոշում կայացնելու պահը, այնպես էլ՝ վերաքննիչ բողոքարկման ընթացքում ապացույցներ հետազոտելու միջնորդություն և վերաքննիչ բողոքի քննության ընթացքում բողոքի սահմաններից ի շահ մեղադրյալի դուրս գալու դեպքերում բանավոր ընթացակարգով բողոքների քննության առանձնահատկությունները: Ժ

Այս համատեքստում, անդրադառնալով գրավոր ընթացակարգով դատաքննության միջազգային իրավական (եվրոպական) պրակտիկայի և այդ բնագավառում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի բովանդակությանն ու առանձնահատկություններին հարկ է նշել, որ Եվրոպական դատարանը իր նախադեպային իրավունքում շեշտել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված՝ գործի հրապարակային քննության իրավունքն անհրաժեշտաբար ներառում է «բանավոր լսման» իրավունքը: Այնուամենայնիվ, նման լսումներ անցկացնելու պարտավորությունը բացարձակ չէ: Այսպես, բանավոր քննության բացակայությունը կարող է համատեղելի լինել 6-րդ հոդվածի պահանջների հետ, երբ քննության ենթակա հարցը չի բարձրացնում

փաստի կամ իրավունքի հետ կապված այնպիսի հարց, որը կարող է պատշաճ ձևով լուծվել գործի նյութերի հիման վրա՝ առանց կողմերի բանավոր դիտարկումների[3]:

Ըստ այդմ, մեղադրյալի մասնակցությունը վերաքննիչ վարույթին չունի նույն վճռորոշ նշանակությունը, ինչպես այն ունի առաջին ատյանի դատաքննությանը[4]: Թերևս հրապարակայնության պահանջն անկասկած բարձրացնում է վստահությունը դատարանների նկատմամբ, սակայն այլ նկատառումներ, ինչպիսիք են, օրինակ, ողջամիտ ժամկետները, նույնպես պետք է հաշվի առնվեն[5]:

Շարադրվածին համապատասխան՝ Սահմանադրական դատարանն անդրադառնալով գրավոր ընթացակարգով դատավարության անցկացման իրավական հնարավորությունների պայմաններում արդար դատաքննության իրավունքի երաշխավորմանը արձանագրել է, որ դատաքննության գրավոր, ինչպես և բանավոր ընթացակարգերն արդարադատության իրականացման կազմակերպական-ընթացակարգային ձևեր են, որոնք իրավական ամրագրմամբ ներդրվելով արդարադատական պրակտիկայում՝ կոչված են. մի դեպքում՝ առանց «բանավոր լսումների» դատաքննական գործողությունների իրականացման, մյուս դեպքում՝ դրանց կատարմամբ ապահովելու դատական գործերի արդար, արդյունավետ և հրապարակային քննություն, դատական ակտերի կայացում և դրանց հրապարակում: Բոլոր դեպքերում, թե՛ բանավոր և թե՛ գրավոր ընթացակարգով գործերի դատաքննությունը պետք է անհրաժեշտ երաշխիքներ ապահովի դատաքննության մասնակիցների իրավունքների իրացման համար[6]:

Միևնույն ժամանակ, դատաքննության բանավորության և գրավոր քննության սկզբունքները հավասարապես կիրառելի են արդարադատության բոլոր բնագավառներում (ընդհանուր իրավասության (քրեական և քաղաքացիական

---

[3] Տե՛ս օրինակ՝ Elsholz v. Germany, Judgment of 13 July 2000, p.66 Տե՛ս նաև Fredin v. Sweden (no. 2), Judgmeut of 23 February 1994, pp. 21-22; Fischer v. Austria, Judgment of 26 April 1995, p. 44

[4] Տե՛ս օրինակ՝ Hermi v. Italy [GC], 2006, § 60:

[5] Տե՛ս օրինակ՝ Fejde v. Sweden, 1991, § 31, Mtchedlishvili v. Georgia, 2021, § 32:

[6] Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի ապրիլի 11-ի թիվ ՍԴՈ-1020 որոշումը:

գործերով), վարչական, սահմանադրական և մասնագիտացված այլ արդարադատության): Գրավոր ընթացակարգով դատաքննության իրականացման առանձնահատուկ դեպքեր և որոշակի հանգամանքներ կարող են լինել օրինակ՝ երբ բացակայում է դատական գործով փաստական հանգամանքների բանավոր քննության անհրաժեշտությունը կամ, եթե դատարան ներկայացված նյութերի (փաստաթղթեր և այլն) բանավոր ուսումնասիրումը (քննությունը) վիճարկվող հարցի հետագա հստակեցմանը չի նպաստելու, և եթե այն չի հակասում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության հանրաճանաչ սկզբունքներին:

Եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի համաձայն՝ այդպիսի դեպքեր կարող են լինել նաև՝

1. գործով արագ դատաքննություն ապահովելու նպատակը,

2. միայն իրավունքի կամ ընթացակարգային հարցերի վերաբերյալ որոշում կայացնելու անհրաժեշտության դեպքերը,

3. դատական վերադասության (վերաքննության, վճռաբեկության) կարգով գործեր (բողոքներ, գանգատներ) քննելիս, եթե այլ կարգ նախատեսված չէ,

4. եթե գործի քննությունը չի հանգեցնում որևէ փաստացի կամ իրավական հիմնախնդրի, և փաստերը հստակեցված են,

5. եթե դատարանի որոշումը չի պարունակելու իրավական գնահատականներ և այլն:

Նման պայմաններում վերաքննիչ ատյանում դատական վերանայման շրջանակում գրավոր ընթացակարգ կիրառելու հնարավորությունը ~~ընդհանուր օրենսդրական կանխավարկածն~~ ինքնին ոչ միայն չի ազդի արդար դատաքննության իրավունքի երաշխավորման վրա, այլ նաև՝ կնպաստի արդյունավետ, որակյալ և ժամանակին արդարադատության իրականացմանը:

Եվրոպական դատարանի պրակտիկան Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով գրավոր դատաքննությունը գնահատում է որպես արդար և հրապարակային, եթե.

- պայմանավորված է բացառիկ հանգամանքներով,

- իրականացվում է ողջամիտ ժամկետներում, ինչպես նաև արագ դատաքննություն ապահովելու նկատառումներով,

- պայմանավորված է քննվող գործի առանձնահատկությամբ,

- սկզբունքորեն կիրառվում է իրավունքի վերաբերյալ հարցեր լուծելիս, ինչպես նաև փաստական այնպիսի հանգամանքներ քննելիս, որպիսիք արդարացված են գրավոր ընթացակարգի պայմաններում:

Շարադրվածին համապատասխան՝ պետք է նկատի ունենալ, որ, երբ առաջին ատյանի դատարանում գործը քննվել է հրապարակային նիստերի միջոցով, վերաքննիչ դատարանում գրավոր ընթացակարգը կարող է արդարացված լինել ներպետական վերաքննության համակարգի, վերաքննիչ դատարանի լիազորությունների շրջանակի, մեղադրյալի շահերի ներկայացման և պաշտպանության եղանակի, ինչպես նաև տվյալ գործով քննության ենթակա հարցերի բնույթի համատեքստում[7]:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ ինչպես նաև նկատի ունենալով քրեական դատավարության իրականացման առանձնահատկությունները, այդ թվում՝ մեղադրյալի շահերի արդյունավետ պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի պատշաճ երաշխավորման հիմնարար գաղափարները, Նախագծով սահմանվում է որ վերաքննիչ բողոքը գրավոր ընթացակարգով քննելու վերաբերյալ որոշում կարող է կայացվել, եթե դատարանը եկել է եզրահանգման, որ գրավոր ընթացակարգով հնարավոր է ապահովել վարույթի լիարժեք, համակողմանի և արդարացի քննությունը: ~~առաջարկվում է նաև վերաքննիչ բողոքների՝ դատական նիստում քննելու իրավական հնարավորություն: Մասնավորապես, բոլոր այն~~

[7] Տե՛ս օրինակ՝ Fejde v. Sweden, 1991, § 27, Mtchedlishvili v. Georgia, 2021, § 31:

~~դեպքերում, երբ վերաքննիչ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ կգա եզրահանգման, որ անհրաժեշտ է վերաքննիչ բողոքի քննությունն իրականացնել դատական նիստում, գործի քննության ցանկացած փուլում կարող է որոշում կայացնել վերաքննիչ բողոքը դատական նիստում քննելու մասին՝ գրավոր ընթացակարգով իրականացող վարույթը փոխակերպելով բանավոր ընթացակարգի:~~

~~Միևնույն ժամանակ, Օրենսգրքի 365-րդ հոդվածի համաձայն՝ վարույթի մասնակիցներն իրավունք ունեն իրենց բողոքի, ինչպես նաև մյուս կողմի բողոքի կապակցությամբ տրված պատասխանի փաստարկումները հաստատելու համար դատարան ներկայացնելու նոր ապացույցներ, միջնորդելու ցուցմունք տալու համար դատարան հրավիրել իրենց նշած անձին, նշանակելու փորձաքննություն, պահանջելու իրենց համար ոչ մատչելի ապացույցներ, **եթե հիմնավորում են, որ օբյեկտիվորեն հնարավորություն չեն ունեցել, կամ օբյեկտիվ անհրաժեշտություն չի եղել հետազոտելու այդ ապացույցները**, հրավիրելու տվյալ անձին կամ առաջին ատյանի դատարանում միջնորդելու նշանակել փորձաքննություն, **կամ հիմնավորում են, որ ներկայացված միջնորդությունն առաջին ատյանի դատարանի կողմից մերժվել է անհիմն:***~~

~~Այսպես~~Միևնույն ժամանակ, դատական վերանայման վերաքննության վարույթի գլխավոր առանձնահատկություններից մեկը վերաքննության սահմանների հարցն է: Սահմանափակ վերանայման հայեցակարգի շրջանակներում դրանք, նախ և առաջ կանխորոշվում են առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված ապացույցներով: Սակայն, դատական ակտի վերանայումը կարող է իրականացվել նաև նոր ապացույցների հիման վրա հիմք ընդունելով Օրենսգրքի 365-րդ հոդվածը: Վերջիններիս հետազոտման նախաձեռնությամբ մինչև դատաքննությունը և դրա ընթացքում կարող են հանդես գալ միայն վարույթի մասնակիցները: ***Ընդ որում՝ համապատասխան միջնորդությունը կբավարարվի, եթե շահագրգիռ անձին կհաջողվի հաղթահարել իր պահանջի հիմնավորման***

ապացուցողական շեմը: Դա նշանակում է նաև, որ ի տարբերություն առաջին ատյանի, վերաքննության վարույթով դատարանն իրավասու չէ իր նախաձեռնությամբ պահանջել և հետազոտել ապացույցներ[8]:

Նման պայմաններում, Օրենսգրքով սահմանված է վերաքննիչ դատարանի կողմից ապացույցներ հետազոտելու միջնորդությունը բավարարելու առավել խիստ պահանջ՝ եթե կողմը հիմնավորի, որ օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել, կամ օբյեկտիվ անհրաժեշտություն չի եղել հետազոտելու այդ ապացույցները կամ հիմնավորվում է, որ ներկայացված միջնորդությունն առաջին ատյանի դատարանի կողմից մերժվել է անհիմն: Ապացույցներ հետազոտելու միջնորդությունը դատարանի կողմից բավարարվելու նման բարձր ապացուցողական շեմի առկայության պայմաններում, առանցքային նշանակություն է ստանում վերաքննիչ բողոքի քննությունը դատական նիստում անցկացնելու հարցը, քանի որ դատարանը կարող է գալ այնպիսի եզրահանգման, որ օրինակ՝ մեղադրական դատավճիռը կայացվել է ապացույցների բավարար ամբողջությամբ չհիմնավորված խոստովանական ցուցմունքի հիման վրա:

Շարադրվածի լույսի ներքո՝ հարկ է նկատել, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է հրապարակային դատաքննության սկզբունքը, որը, ի թիվս այլնի, ապահովում է մեղադրյալի՝ վերաքննիչ դատարանում անձամբ ապացույց ներկայացնելու իրավունքը: Պետք է ընդգծել, որ այն նպատակ է հետապնդում երաշխավորելու մեղադրյալի պաշտպանության իրավունքը[9]:

~~Ամեն դեպքում, հարկ ենք համարում հստակ ընդգծել, որ բոլոր դեպքերում միջնորդության առկայության պայմաններում վերաքննիչ բողոքի բանավոր ընթացակարգով իրականացնելու մերժելու վերաբերյալ դատարանի որոշումը պետք է լինի օրինական, հիմնավորված և պատճառաբանված: Ասվածի մասին է վկայում~~

---

[8] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, էջ 508:

[9] Տե՛ս Tierce and Others v. San Marino, 2000, § 95 in fine:

~~ՄԻԵԴ իրավաբանությունը, որի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը պահանջում է, որպեսզի վերաքննիչ դատարանը հստակորեն պարզաբանի գործի բանավոր քննությունից հրաժարվելու պատճառների մասին[10]:~~

Վերոնշյալի լույսի ներքո՝ ~~հարկ է~~ անդրադառնալով նաև տարբեր պետություններում, գրավոր ընթացակարգ կիրառված լինելու ~~նման~~ կարգավորումների առկայությանը, որպիսի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նմանօրինակ մոտեցում առկա է ***Էստոնիայի քրեական դատավարության օրենսգրքում***: Մասնավորապես, օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ վերաքննիչ բողոքը քննվում է գրավոր ընթացակարգով՝ վերաքննչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում[11]: ***Լատվիայի քրեական դատավարության օրենսգրքի*** 561.1 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործը քննվում է գրավոր ընթացակարգով՝ գործում առկա նյութերով՝ հաշվի առնելով վերաքննիչ դատարանի իրավասությունը: Իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը կարող է որոշում կայացնել վերաքննիչ բողոքը գրավոր ընթացակարգով քննելու վերաբերյալ այն դեպքերում, երբ առարկություններ են ներկայացրել դատախազը կամ այն անձը, որի իրավունքներն ու օրինական շահերը խախտվել է ներկայացված բողոքով[12]: ***Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգրքի*** 406-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ ատյանի դատարանն իրավունք ունի որոշում կայացնել գրավոր վարույթի արդյունքների հիման վրա, երբ դատական վարույթի բոլոր մասնակիցները համաձայնել են[13]:

Շարադրվածից բացի, Նախագծով Օրենսգրքի 368-րդ հոդվածի 3-րդ մասում առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ, հարկ է նշել, որ պայմանավորված

~~[10] Տե՛ս Mtchedlishvili v. Georgia, 2021, § 39:~~

[11] Տե՛ս Էստոնիայի քրեական դատավարության օրենսգիրք, հասանելի է հետևյալ հղմամբ՝ Appeal in 'Estonia - Criminal Procedure Code 2003 (2020) EN', 2025 թվականի ապրիլի 8-ի դրությամբ:

[12] Տե՛ս Լատվիայի քրեական դատավարության օրենսգիրք, հասանելի է հետևյալ հղմամբ՝ Kriminālprocesa likums, 2025 թվականի ապրիլի 8-ի դրությամբ:

[13] Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգիրք, հասանելի է հետևյալ հղմամբ՝ Ukraine-Crim-Pro-Law-amndmnts-through-2018.pdf, 2025 թվականի ապրիլի 8-ի դրությամբ:

վերաքննիչ բողոքները գրավոր ընթացակարգով քննելու հնարավորության ամրագրմամբ ~~նկատի ունենալով գրավոր ընթացակարգով վերաքննիչ բողոքների քննությունն անցկացնելու օրենսդրական կանխավարկածի ամրագրումը,~~ անհրաժեշտություն է առաջանում հստակեցնել դատաքննություն նշանակելու դեպքերը՝ հոդվածում լրացնելով, որ վերաքննիչ դատարանում առաջին դատական նիստը քրեական գործն ստանալուց և ***վերաքննիչ բողոքը դատական նիստում քննելու մասին որոշում կայացնելուց հետո*** նշանակվում է քրեական գործն ստանալուց հետո՝ քսան օրվա, սակայն ոչ ուշ, քան առաջին վերաքննիչ բողոքը ներկայացնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում: Իսկ այն դեպքերում, երբ վերաքննիչ դատարանը բողոքի քննության ցանկացած փուլում Օրենսգրքի 365-րդ հոդվածով նախատեսված ապացույցներ հետազոտելու միջնորդության, ինչպես նաև Օրենսգրքի 264-րդ հոդվածի 3.1~~5~~-րդ մասով նախատեսված դեպքերում որոշման մեջ նշվում է բողոքի քննությունը գրավոր ընթացակարգով իրականացնելու մասին: ~~կայացնում է վերաքննիչ բողոքը դատական նիստում քննելու մասին որոշում, դատական նիստը նշանակվում է վերաքննիչ բողոքը դատական նիստում քննելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո՝ քսան օրվա ընթացքում:~~ Նման կարգավորմամբ մի կողմից երաշխավորվում է որոշակի հանգամանքների դեպքում գրավոր ընթացակարգով իրականացվող վարույթը բանավորի փոխակերպելու հնարավորությունը, մյուս կողմից սահմանվում է նման փոխակերպման դեպքում ողջամիտ ժամկետներում գործելու համար դատական նիստ նշանակելու ժամկետներ: Շարադրվածին զուգահեռ, նկատի ունենալով, որ վերաքննիչ բողոքը գրավոր ընթացակարգով քննելու հնարավորություն է նախատեսվում, Նախագծով դատական վերանայման բողոքի ներկայացվող պահանջները լրացվում են նոր կետով, ըստ որի վերաքննիչ բողոքի հետ կարող է ներկայացվել վերաքննիչ բողոքը գրավոր ընթացակարգով քննելու միջնորդություն՝ առկայության դեպքում:

Նախագծով առաջարկվում է նաև վերաքննիչ բողոքների քննության հստակ ժամկետներ սահմանել, որպիսի կարգավորումը ~~վերաքննիչ բողոքների քննության~~

~~գրավոր ընթացակարգի հետ զուգորդմամբ~~ կնպաստի ~~բողոքների քննության արագությանը, հետևաբար նաև,~~ գործերի ողջամիտ ժամկետներում քննության պահպանմանը: Մասնավորապես, Նախագծի 8-րդ հոդվածով առաջարկվում է վերաքննիչ բողոքների քննությունն իրականացնել 6-ամսյա ժամկետում սահմանելով նշյալ ժամկետը դատարանի պատճառաբանված որոշմամբ 4-ամսյա ժամկետով երակարաձգելու իրավական հնարավորությունը: Ընդ որում, նման ժամկետների սահմանման հիմքում ընկած են Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանված վերաքննիչ բողոքների քննության ուղենիշային ժամկետները: Նկատի ունենալով, որ որոշ բարդ գործերի դեպքում սահմանված 6-ամսյա ժամկետը կարող է բավարար չլինել վերաքննիչ բողոքի քննության համար, նախագծով սահմանվել է 4-ամսյա ժամկետով երկարաձգելու հնարավորությունը, ինչի արդյունքում վարույթի ժամկետը կդառնա 10 ամիս: Հարկ է նկատել նաև, որ չեն բացառվում այն դեպքերը, երբ վերաքննիչ բողոքի վերաբերյալ դատական ակտ կայացման օր նշանակված լինելու պայմաններում դատարանն ավարտած չլինի վերաքննիչ բողոքի քննությունը, օրինակ՝ ապացույց հետազոտելու անհրաժեշտության պայմանավորված, որպիսի դեպքերի համար էլ Նախագծով առաջարկվում է դատական ակտի կայացման օրվա փոփոխություն՝ պահպանելով վերաքննիչ բողոքների քննության սահմանվող առավելագույն ժամկետները:

Այս համատեքստում, նշված կարգավորումները դիտարկելով նաև դատավարական ժամկետների չպահպանման արդյունքում իրավական հետևանքների լույսի ներքո հարկ է նկատել, որ Նախագծով սահմանված ժամկետներում դատարանը պարտավոր է ավարտել գործի քննությունը, իսկ սահմանված ժամկետում չավարտելը չի ենթադրելու գործի քննության դադարեցում, այսինքն դատարանը միևնույն է պետք է շարունակի գործի քննությունը և յուրքանչյուր գործող որոշում կայացնի՝ անկախ ժամկետային սահմանափակման հանգամանքից: Բացի այդ, Օրենսգրքում ներկայում սահմանված են կոնկրետ տեսակի վարույթների իրականացման ժամկետներ, որոնց չպահպանման

վերաբերյալ Օրենսգիրքն հատուկ իրավական հետևանքներ չի նախատեսում: Այսպես, օրինակ՝ Օրենսգրքի 382-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ Վերաքննիչ դատարանում հատուկ վերանայման վարույթն իրականացվում և ավարտվում է բողոքը վարույթ ընդունելուց հետո՝

1) հնգօրյա ժամկետում՝ սույն օրենսգրքի 389-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 5-րդ և 8-րդ կետերով նախատեսված դատական ակտերի դեպքում.

2) տասնօրյա ժամկետում՝ սույն օրենսգրքի 389-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ, 6-րդ, 11-րդ և 12-րդ կետերով նախատեսված դատական ակտերի դեպքում.

3) քսանօրյա ժամկետում՝ այլ դատական ակտերի դեպքում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով նախատեսված ժամկետները վերաքննիչ դատարանի հիմնավորված որոշմամբ կարող են երկարաձգվել համապատասխանաբար ոչ ավելի, քան հինգ, տասը և քսան օրով:

Արդյունքում, կարելի է եզրահանգել, որ դատավարական օրենսդրությամբ սահմանված պահանջները չպահպանելը պրակտիկայում կարող է առաջացնել իրավական տարբեր հետևանքներ: Այսպես, օրինակ՝ «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ 1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ.

2) դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարքագծի կանոնները խախտելը, բացառությամբ սույն օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով սահմանված կանոնի, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Նշված կարգավորումներից բխում է, որ դատավարական իրավունքի նորմի խախտումը, այդ թվում՝ սահմանված դատավարական ժամկետների խախտումները, որոնք հանգեցնում են գործի ողջամիտ ժամկետում քննության, հետևաբար նաև՝ արդար դատաքննության իրավունքի խախտմանը հիմք են դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար: Ուստի և, առաջրկվող դատավարական իրավունքի նորմի խախտման հետ կապված հիմնական հարաբերությունները շարադրվածի համատեքստում կարող է լինել օրինակ՝ «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի կարգավորման առարկան, հետևաբար, Նախագծով այս առնչությամբ կարգավորումներ չեն նախատեսվել:

Այս առումով, նկատի ունենալով, որ մինչև Նախագծի ընդունում անհրաժեշտ է կարգավորել արդեն իսկ ներկայացված և վարույթ ընդունված վերաքննիչ բողոքների քննության ժամկետների հարցը, Նախագծի անցումային դրույթներով սահմանվում է, որ նախքան Նախագծով սահմանվող ժամկետների կարգավորորմների ուժի մեջ մտնելը ներկայացված և վարույթ ընդունված վերաքննիչ բողքները քննվում են օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում:

Նախագծով առաջարկվում է նաև դատավճռին ներկայացվող պահանջների փոփոխություն: Մասնավորապես, սահմանվում է, որ նախագահողը կնքում է վճռի յուրաքանչյուր էջը և ստորագրում է վճռի եզրափակիչ մասը, որը հնարավորություն կտա դատավորների անհարկի ծանրաբեռնվածության թեթևացում՝ մեծածավալ վճիռների յուրաքանչյուր էջը ստորագրելու ձևական պահանջը փոխարինելով միայն վճռի վերջին էջը ստորագրելու պահանջով:

Անդրադառնալով դատական ակտը կողմերին ուղարկելու քրեադատավարական կարգավորումներին, Օրենսգրքի 350-րդ հոդվածի 6-րդ և 379-րդ հոդվածի 2-րդ մասերը սահմանում են, որ դատավճիռը և որոշումը հրապարակումից հետո՝ ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում, կողմերին ուղարկելու պահանջ: Դատական պրակտիկայի վերլուծության արդյունքում իրավացիորեն կարելի է նշել, որ հաճախ օբյեկտիվորեն անհնար է լինում առավելագույն 5 օրվա

ընթացքում դատավճռի կամ որոշման հրապարակումից հետո, դատական ակտը կողմերին ուղարկելը, ինչն անհամաչափ բեռ է դառնում դատավորների համար: Միևնույն ժամանակ, դատական ծանուցումների պատշաճ իրականացման համատեքստում, կարևորվում է դատավարական օրենսդրությամբ հնարավորին մատչելի ընթացակարգերի, այդ թվում՝ ժամկետների նախատեսմամբ առավել արդյունավետ ձևով ապահովելու ծանուցումների իրականացում: Առաջարկվող փոփոխություններով հնարավորություն է ընձեռնվում ողջամիտ ժամկետ սահմանել դատարանի համար՝ վճիռը կողմերի ուղարկելու պարտականության ապահովման տեսանկյունից:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները.

Նախագիծը մշակվել է Արդարադատության նախարարության կողմից:

4. Ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է վերաքննիչ բողոքների գրավոր ընթացակարգով քննության միջոցով թոթափել դատարանների ծանրաբեռնվածությունը, ապահովել գործերի քննության ողջամիտ՝ առավել կարճ ժամկետներ, դատական ակտերի պատշաճ ծանուցումների ապահովման տեսանկյունից ապահովել իրական և օբյեկտիվ հնարավորություն Օրենսգրքով սահմանված ժամկետներում իրականացնել դատավճիռը կողմերին ուղարկելու պահանջը:

5. Նախագծի ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության և ծախսերում սպասվելիք փոփոխությունների մասին.

Նախագծի ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն առկա չէ, իսկ պետական բյուջեում եկամուտների կամ ծախսերի էական փոփոխություն չի նախատեսվում:

6. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ.

Նախագծի ընդունումը բխում է ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2021-2026 թվականների ռազմավարությունից, որում նշվում է, որ քրեական և քրեական դատավարության ոլորտի բարեփոխումները պայմանավորված են ոլորտային նոր օրենսգրքերի ընդունմամբ: Մասնավորապես, ***անհրաժեշտ է ապահովել ինչպես նոր օրենսգրքերի կիրակումը, այնպես էլ դրանց պրակտիկ կիրառման համար ստեղծել անհրաժեշտ իրավական և գործնական նախադրյալներ:*** Քրեական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո դրա գործնական կիրառման կապակցությամբ մոնիթորինգի իրականացումը հնարավորություն է տալիս Արդարադատության նախարարությանը վեր հանել Օրենսգրքի դրույթների կիրառման կապակցությամբ գործնականում ծագող բոլոր խնդիրները: Այս համատեքստում, ըստ անհրաժեշտության մշակվում են համապատասխան իրավական ակտեր գործնական խնդիրների լուծման կապակցությամբ:

Նախագիծն ընդգրկում է Օրենսգրքի դրույթների գործնական կիրառման արդյունքում առաջացած խնդիրները, ինչպես նաև առաջադրված ռազմավարական նպատակների ապահովման տեսանկյունից արդարադատության որակի բարձրացմանն ուղղված կարգավորումներ են առաջարկվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ (Կ-1107-17.06.2025-ՊԻ-011/1) ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ				
1.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 1-ին հոդված**	Առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգիրք) ամրագրել վերաքննիչ բողոքների քննությունը գրավոր ընթացակարգով անցկացնելու իրավական հնարավորություն՝ վերաքննիչ դատարանին հնարավորություն ընձեռնելով կոնկրետ գործով որոշելու՝ գրավոր ընթացակարգ կիրառելու հարցը: Ըստ այդմ, առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածը լրացնել նոր 3.1 մասով, որի համաձայն՝ սույն օրենսգրքի 46-րդ գլխով նախատեսված վարույթը կարող է իրականացվել գրավոր ընթացակարգով, եթե դատարանը սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ եկել է եզրահանգման, որ գրավոր ընթացակարգով հնարավոր է ապահովել վարույթի լիարժեք,	**Ընդունվել է:** **Նախագծի 1-ին հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:**	**Ընդունվել է:**

			համակողմանի և արդարացի քննությունը: Այդ մասին դատարանը կայացնում է որոշում և սույն օրենսգրքով սահմանված կարգով ծանուցում վարույթի մասնակիցներին՝ դատական ակտի կայացման օրվա մասին:		
2.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 4-րդ հոդված**	Նկատի ունենալով, որ վերաքննիչ բողոքների քննության գրավոր ընթացակարգ կիրառելու հնարավորություն է սահմանվում, առաջարկվում է դատական վերանայման բողոքի բովանդակությանը ներկայացվող պահանջներում լրացնել նաև վերաքննիչ բողոքը գրավոր ընթացակարգով քննելու վերաբերյալ միջնորդության վերաբերյալ դրույթ՝ նման միջնորդության առկայության դեպքում: Ըստ այդմ, առաջարկվում է Նախագիծը լրացնել նոր՝ 4-րդ հոդվածով, որի համաձայն նախատեսվում է Օրենսգրքի 355-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակության՝ նոր 6.1 կետով. «6 1) բողոքը գրավոր ընթացակարգով քննելու վերաբերյալ միջնորդություն՝ առկայության դեպքում»:	**Ընդունվել է:** **Նախագիծը լրացնել է նոր 4-րդ հոդվածով:**	**Ընդունվել է:**

3.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 4-րդ հոդված**	Նկատի ունենալով, որ Նախագծի 1-ին հոդվածում առաջարկվում է վերանայել վերաքննիչ բողոքների գրավոր ընթացակարգով քննության վերաբերյալ կանխավարկածը, ըստ այդմ, անհրաժեշտություն է առաջանում խմբագրական փոփոխություններ կատարել նաև Նախագծով Օրենսգրքի 366-րդ հոդվածով առաջարկվող կարգավորմամբ: Մասնավորապես, առաջարկվում է 366-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված հիմքերի բացակայության դեպքում վերաքննիչ դատարանի որոշմամբ բողոքն ընդունվում է վարույթ և նշանակվում դատաքննության, իսկ սույն օրենսգրքի 264-րդ հոդվածի 3.1-րդ մասով նախատեսված դեպքում՝ որոշման մեջ նշվում է բողոքի քննությունը գրավոր ընթացակարգով իրականացնելու մասին:»:	**Ընդունվել է:** **Լրամշակման արդյունքում հոդվածի հերթական համարն է 5: Ըստ այդմ, Նախագծի 5-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:**	**Ընդունվել է:**
4.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 5-րդ հոդված**	Պահպանելով վերաքննիչ բողոքների քննության օրենսդրական գործող կանխավարկածը՝ նպատակահարմար է Նախագծով «բանավոր» ձևակերպումը չամրագրել Օրենսգրքում, քանի որ բանավորության սկզբունքն արդեն իսկ ենթադրվում է գործող կարգավորումներով և առանձին հստակեցման անհրաժեշտություն չի առաջացնում: Ըստ այդմ,	**Ընդունվել է:** Նախագծի լրամշակման արդյունքում հոդվածի հերթական համարն է 6: Ըստ այդմ, Նախագծի 6-րդ հոդվածից հանվել է կարգավորումը:	**Ընդունվել է:**

			առաջարկվում է Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին կետով Օրենսգրքի 368-րդ հոդվածի 2-րդ մասի նոր խմբագրությամբ շարադրելու վերաբերյալ կարգավորումը հանել Նախագծից:		
5.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 6-րդ հոդված**	Պահպանելով վերաքննիչ բողոքների քննության օրենսդրական գործող կանխավարկածը՝ նպատակահարմար է Նախագծով «բանավոր» ձևակերպումը չամրագրել Օրենսգրքում, քանի որ բանավորության սկզբունքն արդեն իսկ ենթադրվում է գործող կարգավորումներով և առանձին հստակեցման անհրաժեշտություն չի առաջացնում: Ըստ այդմ, առաջարկվում է Նախագծի 6-րդ հոդվածով առաջարկվող Օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին մասը նոր խմբագրությամբ շարադրելու կարգավորումը հանել Նախագծից:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
6.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 9-րդ հոդված**	Նկատի ունենալով, որ մինչև Նախագծի ընդունում անհրաժեշտ է կարգավորել արդեն իսկ ներկայացված և վարույթ ընդունված վերաքննիչ բողոքների քննության ժամկետների հարցը, առաջարկվում է Նախագծի 9-րդ հոդվածը լրացնել նոր 2-րդ մասով, որի համաձայն՝ «2. Նախքան սույն օրենքի 7-րդ հոդվածի նախատեսված կարգավորումների ուժի մեջ մտնելը ներկայացված և վարույթ ընդունված վերաքննիչ բողքները քննվում են սույն	**Ընդունվել է:** Նախագծի 9-րդ հոդվածը լրացվել է նոր՝ 2-րդ մասով:	**Ընդունվել է:**

			օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում:»:		